

բարոդութիւնս, եւ «ոչ ընդ այլազգիս¹» (Հրց. 655): Իրաւ է՝ թէ Յիսուս հացն «եւ բեկ» եւ այնպէս տուաւ ժողովրդեան, կամ աշակերտաց վերնատան մէջ (Մտթ. ԺԿ, 19. ԻԶ, 26). Ինչպէս ըրաւ Պաւղոս ալ նաւուն մէջ (Գրծ. ԻԷ, 35): Կրնայ մեր բեկումն այդ աւետարանական յիշատակէն ծագած լինել. բայց ոչ եւ խաչածելը, որ աւելի նմանութիւն է պատարագի նշխարին խաչանման բեկման, ինչ որ հին սովորութիւն էր արեւելեան արարողութեան մէջ:

Տաթեւացւոյն այդ աւանդութիւնը դեռ շարունակուեր է ԺԿ դարէն վերջ ալ: 1662ի ամստերդամեան տպ. ժամագրին նորամուտ հրահանգաց մէջ, զորս յետոյ ուրիշ տպագրութիւնք ալ կ'առնուն, կայ այն տարբեր հանգամանօք: «Օրհնող սեղանոյն», կ'ըսէ, որ հարկաւ եկեղեցական է, «կարով կանգուն», կ'առնու հացն ու կը բեկանէ մերձակայ «պատուաւորաց» եւ կամ ճաշը «պատրաստողին» հետ, «եւ նոքօք առ ամենեւեան». այս ինքն անոնք ալ իրենց մասէն կը բաշխեն բոլոր միւս մերձակայից յաջորդաբար: Յետոյ օրհնողը

1. Այդ վերջին կտորը չակերտի մէջ՝ Վենետիոյ 1401ի և 1424ի օրինակաց համեմատ է, և տպագրին մէջ չկայ: